

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՐԱԴՈՒՄԻ 600-ԱՄԵԱԿ ՍԵԼՃՈՒՔԵԱՆ ԳՐԱԴՈՒՄԻ 1000-ԱՄԵԱԿ

Posted on July 8, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



ՍԵՐԳ Գ. ՏԵՐՏԵԱՆ, ՊԵՂՈՒԹ, 5 ՅՈՒՆԻՍ 2020

Սուլթան Էրտողան (... **կանխածի՞ն**), յաճախ իր «փարանոյա»-ն (մտազարուբիւն) սանձազերծելով, կը սոնքար թէ ինք ժառանգորդն է օսմանցիներուն եւ սելճուքներուն, եւ մեծ շուքով պիտի նշէ Կոստանդնուպոլսոյ գրաւումին 600-ամեակը՝ 2053 թուին, եւ սելճուքներու Ա.

Յաղթական արշաւանքին 1000-ամեակը՝ 2071 թուին: Կ'երեւի թէ՛ վերջերս ան կորսնցուցած է լաւատեսութիւնը իր հեռանկարներուն նկատմամբ: Անհամբերացած ու մեծ շտապողականութեամբ, յանկարծ որոշեց մեծ շուքով նշել Կոստանդնուպոլսոյ գրաւումին 567-րդ տարեդարձը՝ 29 Մայիս 2020 թուին, 33 տարի չսպասելով...: Եւ շատ մեծ շուքով ու շննդալից նշումն ալ կատարեց բիւզանդական Այա Սոֆիա տաճարին մէջ, իսլամական ու օսմանական ռազմական արարողութիւններով եւ Քուր'անէն ընթերցումներով եւ օսմանեան զինուորական երաժշտութեամբ, հսկայ տաճարին պատերը ծածկելով օսմանեան բանակի յաղթական դրուագներու մեծադիր պատկերներով...: Եւ... պսակածեւ ճահրէն (Covid19) վախնալով կամ այլ գաղտնի պատճառով, Էրտողան վիտեոյի միջոցով անձնապէս հովանաւորեց մեծաշուք պետական հանդիսութիւնը: Իր երկար ճառի եզրակացութեան մէջ ըսաւ. «Բիւզանդիոնի անհաւատներու կայսրութիւնը ՍԵԲ քաղաքակրթութիւն էր, որուն յաղթեց օսմանեան իսլամի լուսաւորութեան քաղաքակրթութիւնը...»: (Նախորդող տարիներուն ան այս տարեդարձը նշել կու տար երկրորդական պաշտօնատարի մը՝ խորհրդանշական եւ անշուք ձեւով...):

Այս ճառը կը նմանէր Չիա Կեօք Ալփի եւ Նիհալ Ատսըզի համա-թուրքական առասպելապատումին: Չիա Կեօք Ալփ գրած էր (իր "Türkçülügün Esaslari" հատորին մէջ) 1923-ին, "Güneş Dil Teorisi"ի մը մասին, որ կ'ըսէր թէ՛ թրքերէն լեզուն Արեւային է, եւ մայրը՝ աշխարհի միւս բոլոր լեզուներուն... առանց խայնելու, որ Teorisi բառը թրքերէն չի կրնար ըլլալ, քանի որ Կեդրոնական Ասիոյ ժողովուրդները վաչկատուն ու վարձկան զինուորներէ բաղկացած էին, որոնց իմացական կարողութիւնը չէր կրնար ըմբռնել «տեսութիւն» յղացքը: (Հետեւաբար, ներկայի թրքերէնին մէջ գտնուող հայերէն եզրերը մե՞նք փոխ առած ենք թրքերէնէն...: Կամ՝ ներկայի թրքերէնին մէջ գտնուող տասնեակ հազարաւոր պարսկերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ տակաւին ուրիշ լեզուներու եզրերը...):

Իսկ աւելի ուշ, Նիհալ Ատսըզ՝ իր "Türk Tarihinde Meseleler" հատորին մէջ (1977-ին) գրած էր թէ՛ օսմանցիները "Orta Doğu Asiadan Geldiler ve Medenierliği Dünyada Yaydılar" (Միջին Ասիայէն եկան եւ քաղաքակրթութիւնը տարածեցին Աշխարհին մէջ...): Այս եւ միւս համա-թուրքական առասպելապատումները այսօր սկսած են կորսնցնել իրենց կարելորութիւնն ու անհրաժեշտութիւնը, երբ զիրենք հովանաւորող Արեւմտեան վերջին կայսերապաշտութիւնը նահանջի մէջ է... խուճապի մատնելով «սուլթան» Էրտողանը,

որ հաւանաբար չսպասէ մինչեւ 2071... մեծ շուրջով տոնելու համար նաեւ՝ սելճուքեան յաղթական Ա. Արշաւանքին մէկ տարեդարձը: Սակայն այդքանով չի կրնար ջնջել պատմական այն փաստը, որ 1042 թուին, Անիի Բագրատունեաց թագաւորութեան վրայ սելճուքեան առաջին արշաւանքը (Գագիկ Բ. Գրեթէ երիտասարդ թագաւորի օրով) պարտուած էր հայկական բանակէն՝ Չօր. Վահրամ Պահլաւունիի հրամանատարութեամբ: Սակայն, Բիւզանդիոնի Մօրիկ կայսրը՝ փոխանակ Անիի Բագր. թագաւորութեան պատնէշը զօրացնելու սելճուքեան յաջորդական արշաւանքներուն դէմ, գործեց պատմական մեծագոյն սխալը 1045 թուին, երբ ինք գրաւեց Անիի թագաւորութիւնը, դաւաճանութեամբ Վեստ Սարգիսի եւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի... տկարացնելով իր բանակը սելճուքեան յաջորդ արշաւանքներուն առջեւ, եւ՝ պարտուեցաւ: Այլապէս՝ սելճուքեան արշաւանքը չէր կրնար յաղթանակել՝ բիւզանդական ու հայկական բանակներու միացեալ ճակատին վրայ...: Վերադառնալով Կոստանդնուպոլսոյ (Constantinople) գրաւումին, այս պատմական քաղաքին անունը նախ փոխուեցաւ Եսթանայի, ապա՝ Իսլամպոլի, եւ հոսկ՝ Իսթանպոլի:

Այլեւս յոռետես ու խուճապահար դարձած «սուլթան» Էրտողան, առայժմ կը միխթարովի AKP-ի նոր-օսմանական ռազմական կարգ մը նուաճումներով՝ Հիւսիսային Իրաքի, Հիւսիս-Արեւմտեան Սուրիոյ եւ Լիպիոյ մէջ: Սակայն, Իրաքի մէջ ձեւականօրէն կը համագործակցի թշնամի Իրանի հետ, Սուրիոյ մէջ՝ Ռուսաստանի հետ, իսկ Լիպիոյ մէջ՝ զօրավիճ կը կանգնի ԱՄՆ-ի դրածոյ իշխանութեան հետ (Ֆայել Ալ-Սարրաժի վարչապետութեամբ), ողորել յուսալով Թրամփը, եւ կը պատերազմի այս իշխանութեան ընդդիմադիր՝ Մարեշալ Խալիֆէ Հաֆթարի դէմ, որուն ուղղակի նեցուկ կը կանգնի Ռուսաստանը, եւ անուղղակի՝ Եգիպտոսը, Սեւուական Արաբիան եւ Էմիրութիւնները, որպէսզի արգիլեն Թուրքիոյ Իսլամ Սիւննիթ աշխարհի առաջնորդութիւնը, յափշտակելու Սեւու Արաբիոյ ձեռքէն...: Միաժամանակ, պատերազմելով հանդերձ Հաֆթարի բանակին դէմ, կը զգուշանայ ուղղակի ճակատելէ Ռուսաստանի հետ... եւ թրքական բանակի զինուորներէն աւելի՝ հոն կ'օգտագործէ իրեն վարձկան սուրիացի ահաբեկիչները, զորս ան քաշեց Իտլիպէն՝ Ռուսաստանի պահանջով:

Տակաւին, «սուլթան» Էրտողան հանգիստ չունի նաեւ ներքին ճակատի վրայ, ուր չկայ ազգային համերաշխութիւն կամ միասնականութիւն: Նախ՝ նոյնիսկ AKP կուսակցութիւնը ունեցաւ մեծ պառակտում մը, երբ իր անմիջական գործակիցները (Ապտալլա Կիւլ, Ահմետ Տաւութօղլու եւ Ալի Պապաճան) հրաժարեցան AKP-էն, եւ հիմնեցին իրենց անջատ կուսակցութիւնները: Ապա՝ կայ ԱՄՆ ապաստանած Կիւլէնի հետեւորդներու ընդդիմութիւնը: Յետոյ՝ շատ աւելի մեծ ընդդիմութիւնը՝ քիւրտերու եւ ալեւիներու, որոնք կը կազմեն մօտ 40 միլիոն «թուրքիացի» (թիւրքիէլի) եւ մօտ 10-15 միլիոն բազմազգի լայիք ու դեմոկրատական կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ, որոնք դէմ են Էրտողանի միանձնեայ ֆաշիզմին...: Եւ՝ այս բոլոր ընդդիմադիրներու պատգամախօս գրողներն ու մանաւանդ լրագրողները՝ խիզախօրէն ամէն օր ՉԼՄ-ու մէջ կը մերկացնեն Էրտողանի վարած արկածախնդրական ու

Ֆաշական քաղաքականությունը, յաջա հանրության հեղինակագրելով գիրք:

29 Մայիս 2020 թուի այս աննախընթացորեն մեծաշնիղ հանդիսությունը Այա Սոֆիայի Տաճարին մեջ, բուն բանավեճեր ստեղծեց իշխանամետ եւ ընդդիմադիր թերթերու միջեւ, որոնց իբր նմոյշ պիտի անդրադառնանք այստեղ AKP-ական «ԵԷՆԻ Շաֆաք»ի եւ CHP-ական «Ճումհուրիէթ»ի միջեւ անցած բանավեճին:

«ԵԷՆԻ Շաֆաք»ի մեջ, Չէքի Քուրշուն՝ իր գրգռիչ յօդուածով, Կոստանդնուպոլսոյ գրաւումը համարեց համագոր Մուհամմետ Մարգարէի Մեքքէ մուտքին... եւ՝ անելիին...: Որովհետեւ՝ եթէ Մարգարէին Մեքքէ մուտքը, Մեքքէին տուաւ համաշխարհային ճանաչում, որպէս իսլամ աշխարհի մեծագոյն սրբատեղին, Կոստանդնուպոլսոյ «ազատագրում»ը (գրաւումը) ողջ աշխարհին դաս տուաւ՝ կրօնական համակեցութեան քաղաքակրթութեան շուրջ... (եղե՛ր):

Իսկ նոյն թերթի խմբագրապետը՝ Իպրահիմ Գարակիլ, փոխանորդելով Էրտողանի կատաղութիւնը, իր խմբագրականին մեջ կատաղի յարձակում մը կատարեց Թուրքիոյ «թէ՛ արեւմտեան եւ թէ՛ արեւելեան թշնամիներուն» դէմ... «որոնք կ'ուզեն խեղդամահ ընել Թուրքիան»...:

Ովքե՞ր կրնան ըլլալ Թուրքիոյ «արեւելեան» թշնամիները, եթէ ոչ՝ Ռուսաստանը, Իրանը եւ Չինաստանը: Ասիկա աննախադէպ հրապարակային թշնամական պոռթկում մըն է՝ յատկապէս Ռուսաստանի դէմ: Որոշ է թէ՛ խմբագրապետը, միայն ամիս մը առաջ, համարձակութիւնը ունեցած պիտի չըլլար նման պոռթկում մը ունենալու՝ «Թուրքիոյ արեւելեան թշնամիներուն» դէմ: Իսկ այսօր, որոշ է թէ՛ ան վերջերս ստացած է «սուլթանի» կանաչ լոյսը կամ հրահանգը այս ուղղութեամբ... (Մեր անմիջապէս նախորդ գրութեան մեջ, մենք կանխագուշակած էինք, թէ Էրտողան կորսնցուցած է իր լաւատեսութիւնը՝ Փութինի հետ իր յարաբերութեան հեռանկարին նկատմամբ): Ուրեմն, այսօր՝ առաւել յոռետես դարձած ըլլալով այդ հեռանկարին նկատմամբ, անելի մեծ խուճապով շտապած է՝ օդին մեջ ճօճելու օսմանեան եւ սելճուքեան հնամաշ ու ժամանակավրէպ դարձած յաղթանակներուն սուրը, հրաժարելով Ռուսաստանի նկատմամբ ցարդ ցուցաբերած իր հաշուենկատ գործնականապաշտութենէն (փրակմաթիզմէն):

Իսկ առ ի պատասխան «ԵԷՆԻ Շաֆաք»ի կատաղի յարձակողականին, ընդդիմադիր «Ճումհուրիէթ» թերթին մեջ, Էրտալ Աթապէկ երկարաշունչ պատմական յօդուած մը գրած է: Ան նախ կը նկարագրէ, թէ Նոր-օսմանականութեան կարօտախտով վարակեալները ինչպիսի միամտութեամբ կը հրճուին, երբ լսեն «Ճիհատ-Ֆաթի-Ղանիմէ» երրորդութեան յաղթանակներուն լուրերը: (Յիշեալ երրորդութեան «Ճիհատ»ը իսլամի պաշտպանութեան համար թափուած ջանքն է, «Ֆաթի»ը իսլամի կողմէ ձեռքբերուած նուաճումն է, որ գրաւում մըն է, բայց իսլամի տրամաբանութեամբ՝ «ազատագրում» է, իսկ «Ղանիմէ»ն գրաւումով ձեռք բերուած աւարն է: Այս

երրորդության ոչ մեկ բաղադրիչը կապ ունի քաղաքակրթության հետ, իսկ գրաւումն ու աւարը՝ բարբարոսական են): Եւ կը շարունակէ. «Մուհամմետ Մարգարէի մուտքովը Մեքքէ, միաստուածեան երրորդ կրօն մը հաստատեց, որ հարիւրաւոր միլիոններով հետեւորդներ ունեցաւ: Սակայն, Ֆաթիհ Սուլթան Մուհամմետ Բ.ի գրաւումը Իսթանպուլի՝ յատուկ տեղ մը ունենալով հանդերձ Օսմանեան Կայսրութեան պատմութեան մէջ, միայն հանգրուան մըն է աշխարհի պատմութեան մէջ, իր արիւնալի պատերազմի էջերով ու բնիկ ժողովուրդներու ջարդերով, եւ անփառունակ վախճանով:

Մինչդէռ, այդ առաջին օրերուն, Եւրոպան արդէն մուտք գործած էր Վերածնութեան (Renaissance) դարաշրջան, ուր կային 50-է աւելի համալսարաններ, ուր աշխարհահռչակ աստղաբնագետ Կալիլէօն մաթեմաթիկա կը դասախօսեր Բիզանի համալսարանին մէջ, եւ Եւրոպան վերջ կը դնէր օսմանեան պետութեան նմանող աստուածապետական (théocratique) իշխանութիւններուն եւ կ'իրագործէր Բարենորոգութիւնը (La Réforme), մուտք գործելով մարդկայնական գիտութիւններու (Sciences Humanistes), մտածողութեան եւ արուեստներու դարաշրջան, եւ Սբ. Գիրքը լատիներէնէ կը թարգմանուէր ֆրանսերէնի, անգլերէնի եւ գերմաներէնի, եւ հոն սկսած էր գործել Կիւթենպերկի առաջին տպարանը...: Մինչդէռ՝ օսմանեան պետութիւնը ամբողջութեամբ դուրս մնացած էր այս ամենուն լուսաւորութեան աշխարհէն, եւ ոչ մեկ նորարար ճիգ թափած էր այս մարզերէն ներս: Իսկ տպարանը՝ հազիւ կրցած էր հոն մուտք գործել 1730 թուին, եւ սակայն մերժեց Քուր'անը թարգմանել օսմաներէնի, անոր ընթերցումը սահմանափակելով արաբերէնի ծանօթներուն միայն: Իսկ միայն Մուսթաֆա Զեմալ Աթաթուրքն էր, որ աշխարհիկ (լայիք) պետութիւն հաստատելով հանդերձ, Քուր'անը թարգմանել տուաւ լատինատառ թրքերէնի, հրաժարելով օսմաներէնի տառերէն...»:

Եւ Էրտալ Աթապէկ, եզրափակելով իր յօդուածը, կը գրէ. «Իսթանպուլի գրաւման տարեդարձին առիթով Էրտողանի կազմակերպած այս աննախընթացօրէն շննդալից, եւ բիւզանդական քրիստոնէական Այա-Սոֆիա տաճարին մէջ կայացած պետական ու զինուորական հանդիսաւորութեամբ եւ օսմանեան քայլերգերով այս բեմադրութեան համապատկերը ցոյց կու տայ՝ թէ երկրի իշխանութիւնը երկիրը դէպի ո՞ր արկածախնդրութեան կ'առաջնորդէ»: («ԵԷՆԻ Շաֆաք» եւ «Ճուլմիուրիէթ» թերթերէն մէջբերումները կատարած ենք լիբանանցի հմուտ թրքագետ Մուհամմետ Նուրետտինի յօդուածէն, որ լոյս տեսաւ լիբանանեան «Ալ-Ախպար» օրաթերթի 2 Յունիս 2020 թուակիր համարին մէջ: Մենք հեռախօսային զանգով շնորհաւորեցինք զինք, իր այս յօդուածին համար, եւ որոշեցինք հայ ընթերցողին հասանելի դարձնել՝ երկու հակադիր մէջբերումները):

Ահա այսպէս, Օսման եւ Սելճուք բարբարոսներու ժառանգորդ ճաճանչափայլ «սուլթան» Էրտողան՝ քաղաքակրթութեան դասեր կու տայ աշխարհին, այսօր՝ 21-րդ դարուն, առանց խպնելու, առանց այլայլելու կամ վարանելու: Անաչառ հոգեախտաբան մը ի՞նչ ախտաճանաչում պիտի տար արդեօք այս պահուն Էրտողանի հոգեվիճակին մասին:

Եթե՝ «սուլթան» Էրտողան, AKP-ի երկարատև իշխանության շրջանին Թուրքիոյ «խորքային իշխանութիւնը» հանդիսացող Քեմալական Բանակը մաքրագործած չըլլար՝ հեղինակաւոր ու բարձրաստիճան քեմալական զինուորականներէն, ներկայի Թուրքիոյ պարզած ներքին արտակարգօրէն խռովեալ եւ անկայուն իրավիճակը, անխուսափելի դարձուցած պիտի ըլլար զինուորական նոր յեղաշրջում մը: Սակայն այսօր՝ Քեմալականութեան առումով, ամորձահատուած բանակը, ցոյց չի տար այդպիսի յեղաշրջումի մը պատրաստակամութիւնը կամ ցանկութիւնը:

Իսկ Էրտողանի հակառակորդ ընդդիմադիր բոլոր դեմոկրատական ուժերը դեմ են զինուորական յեղաշրջումին, զայդ նկատելով՝ հակադեմոկրատական ու ֆաշական յեղաշրջում, եւ սակայն, իրենք եւս պատրաստ չեն (կամ ցարդ յաջողած չեն) միաւորուելու միացեալ ճակատի մը մէջ, որպէսզի իրականացնեն դեմոկրատական յեղաշրջումը, կամ՝ յեղափոխութիւնը...: Եւ այս երկու կողմերուն (բանակին ու ժողովուրդին) անպատրաստութենէն կ'օգտուի միապետ Էրտողան, իր միանձնեայ բռնատիրութիւնը պարտադրելու համար: Որովհետեւ՝ անպատրաստութեան պատճառը այն է, որ այդ բոլոր ուժերը չեն ներկայացներ միասեռ զանգուած մը... այլ՝ բաժանուած են ցեղային, ազգային, կրօնական ու դասակարգային առումներով ալ...:

There are no comments yet.